ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՏԱՎՈՒՇ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ընտրե՛ք ճիշտ պնդումը։**

1) 564 թ. պարսիկ մարզպան Սուրենը Հայաստանը թուլացնելու նպատակով հողեր ժառանգելու իրավունք է շնորհել սեպուհներին։
2) Բագրատունյաց թագավորության հռչակման համար նախադրյալ է հանդիսացել արևմտաեվրոպական քրիստոնեական երկրների և Հայոց եկեղեցու միջև ձեռք բերված փոխօգնության համաձայնագիրը։
3) Խաչակիր մատենագիրները իրենց աղբյուրներում Կիլիկիայի հայկական պետությանն անվանել են Հայոց աշխարհ կամ Մեծ Հայք։
4) 1065 թ. Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց կայսրից ստացել է Կիլիկյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաքաղաքը։

2 **Տրվածներից ո՞րը Ք. ա. 66 թ. Արտաշատի պայմանագրի հետևանք չէ։**

1) Հօգուտ Հռոմի Հայաստանը հրաժարվեց Պաղեստինից
2) Պարթևստանին միացավ Հյուսիսային Միջագետքը
3) Ծոփքի գանձարանից Հռոմին վճարվեց ռազմատուգանք
4) Հռոմի դաշնակից Պարթևստանը չստացավ Կորդուքը

3 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) Կարինի հայ բնակչության ջարդերի վրա մեծ տերությունների ուշադրությունը հրավիրելու նպատակով 1895 թ. հուլիսին Բաբը Ալի թաղամասում կազմակերպվեց խաղաղ ցույց։
2) Օսմանյան իշխանությունները 1894 թ. անցան հայության զանգվածային կոտորածների կազմակերպմանը, որի առաջին հարվածն ուղղվեց Զեյթունի դեմ։
3) Թուրքիայի մեծ վեզիր Քյամիլ փաշան հայտարարել է, որ Եվրոպայում օձ սնուցելով Օսմանյան կայսրությունը զրկվեց Բուլղարիայից. որպեսզի նույնը տեղի չունենա Ասիայում, անհրաժեշտ է բնաջնջել հայությանը։
4) 1896 թ. Կ.Պոլսում կազմակերպված առաջին ջարդերին զոհ գնաց շուրջ 2 հազար մարդ։

4 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ։**

1) 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի շրջանի հայ բնակչության դեմ։
2) 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն։
3) 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ-ում տեղի ունեցած հանրաքվեում քվեարկողների 99 տոկոսը քվեարկեց անկախության օգտին։
4) 1991 թ. նոյեմբերին Ռուսաստանը և ԱՄՆ-ն ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը որպես ինքնիշխան պետություն։

5 **Տրվածներից ո՞րն Վաչե Մամիկոնյանի գործունեության հետևանք չէ։**

1) հայոց բանակը 336 թ. պարտության մատնեց Մեծ Հայք ներխուժած պարսկական զորքին
2) մազքութները պարտության մատնվեցին Օշականի Ցլու գլուխ լեռան մոտ
3) վերադարձվեց Դարույնք բերդում պահվող Արշակունյաց գանձերը
4) լուծվեց եպիսկոպոս Գրիգորիսի սպանության վրեժը

6 **Տրվածներից ո՞րն է Սմբատ II Բագրատունու գործունեության հետևանք։**

1) կաթողիկոսական աթոռը փոխադրվեց Արգինայի վանք
2) Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակվեց Երազգավորսը
3) հնազանդվեցին Սյունյաց և Աղվանից թեմերը
4) Դվինի ամիրայությունը միացվեց Անիի Բագրատունյաց թագավորությանը

7 **Նշվածներից ո՞րը Սան-Ստեֆանոյի 1878 թ. պայմանագրի վերանայման պատճառներից չէ։**

1) Բալկաններում և Արևելքում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն առաջացրեց առաջին հերթին Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի դժգոհությունը, որոնք պահանջեցին պայմանագրի կետերն ամբողջությամբ համաձայնեցնել իրենց հետ։
2) Ռուսական կառավարությունը, անհանգստանալով մեծ տերությունների պատերազմի սպառնալիքներից, համաձայնեց պայմանագիրը քննարկել նրանց հետ։
3) Մայիսի 18-ին Լոնդոնում կնքվել էր ռուս-անգլիական համաձայնագիր, որը նախատեսում էր Սան Ստեֆանոյի պայմանագրի կետերի վերանայում։
4) Գերմանիան, Թուրքիայից ստանալով Կիպրոս կղզին, Ռուսաստանին պարտադրեց Բեռլինում մեծ տերությունների հետ քննարկել Սան Ստեֆանոյի պայմանագիրը։

8 **Նշվածներից ո՞րը Բաթումի պայմանագրի հետևանքներից չէ։**

1) Առանձին հայկական կորպուսը վերակազմավորվեց դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ Մովսես Սիլիկյանը։
2) Օսմանյան կայսրությունը ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը։
3) Թուրքիային էին մնում Արդվինը, Կարսը, Արդահանը, Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը, Օլթին, Նախիջևանը, Սյունիքը, Արցախը։
4) Թուրքիային էր մնում Ալեքսանդրապոլը և երկաթուղին՝ մինչև Ջուլֆա։

9 **Թվարկված աշխատանքներից որի՞ հեղինակը Գևորգ Բաշինջաղյանը չէ։**

1) «Զանգեզուր»
2) «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»
3) «Դեպի Արագած տանող ճանապարհը»
4) «Արարատ»

10 **Առաջին հնգամյակի տարիներին ո՞ր քաղաքում է կառուցվել քիմիական պարարտանյութերի գործարանը։**

1) Երևան
2) Վանաձոր
3) Լենինական
4) Արարատ

11 **Քանի՞ մեհենագրային արձանագրություն է պահպանվել Վանի թագավորության շրջանից։**

1) ավելի քան 1500
2) ավելի քան 2000
3) ավելի քան 2500
4) ավելի քան 3000

12 **Որտե՞ղ է տպագրվել «Խառնայփնթուր տումարի. գեղեցիկ ու պիտանի» տումարացույցը։**

1) Վիեննայում
2) Կ.Պոլսում
3) Վենետիկում
4) Լվովում

13 **Հայ-թաթարական 1905-1906 թթ. բախումների ժամանակ ո՞ր տարածքի ինքնապաշտպանությունն էր ղեկավարում Արմեն Գարոն:**

1) Բաքու
2) Թիֆլիս
3) Ղարաբաղ
4) Զանգեզուր

14 **Ո՞վ է եղել ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի առաջին նախագահը:**

1) Լևինսոն-Լեսսինգը
2) Հովսեփ Օրբելին
3) Աբրահամ Ալիխանյանը
4) Վիկտոր Համբարձումյանը

15 **Ըստ Բյուզանդիայի վարչատարածքային բաժանման՝ ո՞րն էր համապատասխանում Բարձր Հայքի տարածքին:**

1) Չորրորդ Հայքը
2) Մասն Մեծ Հայոցը
3) Խորագույն Հայքը
4) Մեծ մասն Մեծ Հայոցը

16 **Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցին թույլատրել Արևմտյան Հայաստանում դպրոցներ բացել:**

1) Թեոդոսիոս I-ը
2) Հուստինիանոս II-ը
3) Թեոդոսիոս II-ը
4) Հուստինիանոս I-ը

17 **Ո՞ւմ խոսքն է.**

«Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը. քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:

1) Պարսից Վաղարշ թագավորի
2) Մորիկ կայսեր
3) Խոսրով II Անուշիրվանի
4) Հուստինիանոս I-ի

18 **Ո՞ր ճակատամարտի ժամանակ են հայ մարտիկները միմյանց քաջալերել հետևյալ խոսքով.**

«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար»:

1) Արճեշի
2) Ներսեհապատի
3) Արձնիի
4) Ճարմանայի

19 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

1) 226 թ. Պարսկաստանում Սասանյանների իշխանության գալուց հետո ստեղծված իրավիճակը Մովսես Խորենացին անվանել է *Ժամանակ անիշխանության*:
2) I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջանն անվանվում է *բուն հելլենիստական ժամանակաշրջան*:
3) Հայկազուն-Երվանդականների օրոք զորքի գերագույն հրամանատարը կոչվում էր *առաջին սպարապետ*:
4) Արշակունյաց շառավիղներից ձևավորված ազնվական խավի ներկայացուցիչները կոչվում էին *ոստանիկներ*:

20 **Տերմինների կամ հասկացությունների տրված հասկացություններից ո՞րն է ճիշտ:**

1) Ռուսաստանում միապետական կարգերի տապալումից հետո ձևավորված գործադիր նոր իշխանությունը անվանվեց Պետրոգրադի բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդ:
2) Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ձևավորված գործադիր իշխանության նոր մարմինը անվանվեց Անդրկովկասյան կոմիսարիատ:
3) Արևմտահայ զորաբաժնի (երկարապահ դիվիզիա) ձևավորման համար ստեղծվեց գործադիր նոր մարմին, որն անվանվեց Հայաստանի ապահովության խորհուրդ:
4) Ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. դեկտեմբերի հրամանով կովկասյան ճակատում սկսեց կազմավորվել նոր զորամիավորում, որն անվանվեց Առանձին հայկական հարվածային կորպուս:

21 **Տրված պատճառահետևանքային կապերից ո՞րն է սխալ:**

1) Ապստամբած երկրները վերանվաճելու նպատակով Դարեհ I-ն ստիպված է եղել Ք. ա. 522-521 թթ. արշավանքներ ձեռնարկել մի շարք ուղղություններով:
2) Քսերքսես II-ից կրած պարտության ամոթը փարատելու համար Քսենոփոնի զինված ուժերը գրավել են Հայաստանի տարածքը և այդպիսով դուրս եկելՍև ծովի ափ:
3) Երվանդ II սատրապն իր կյանքի վերջին տարիներն անցկացրել է Հունաստանում, որովհետև մինչ այդ գլխավորել է Աքեմենյանների դեմ բարձրացրած մի քանի սատրապների ապստամբությունը:
4) Ալեքսանդր Մակեդոնացին ուղարկել է Մենոն զորավարին Մեծ Հայք՝ Բարձր Հայքի ոսկու հանքերը գրավելու նպատակով:

22 **Ընտրե՛ք իրադարձությունների պատճառահետևանքային կապերը ճիշտ արտահայտող տարբերակը:**

ա. Հակոբ Ջուղայեցու գլխավորած պատվիրակությունը Կ.Պոլսից հետ վերադարձավ Հայաստան, քանի որ թուրքական կառավարությունը արգելեց նրա անցումը Եվրոպա:
բ. Իսրայել Օրու Պֆալցյան ծրագիրը չիրագործվեց, քանի որ Ֆլորենցիան հրաժարվեց աջակցություն ցուցաբերելուց:
գ. 1720-ական թթ. Սյունիքի ազատագրական պայքարի հետևանքով որոշակի ժամանակով վերականգնվեց հայկական իշխանությունը:
դ. Հովսեփ Էմինի Արցախից հեռանալու պատճառը Սիմեոն Երևանցի կաթողիկոսի՝ Էմինին չընդունելու և չօժանդակելու հրամանն էր:
ե. 1720–ական թթ. Շիրվանի հայկական բնակավայրերից Ավան ու Թարխան հարյուրապետերի Արցախ ժամանելու պատճառը ռուսական զորքերի հաջողություններին նպաստելն էր:
զ. Սյունիքում և Արցախում 1720–ական թթ. ծավալված ազատագրական պայքարը ստիպեց պարսից պետությանն իր հետագա քաղաքականության մեջ հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքները:

1) ա, բ, գ
2) բ, դ, ե
3) գ, դ, զ
4) ա, ե, զ

23 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության:**

ա. Տրդատ II-ի արշավանքը Տիզբոն
բ. Վաղարշ II-ի և Սեպտիմիոս Սևերոսի միջև պայմանագրի կնքումը
գ. Սոհեմոս-Տիգրանի երկրորդ անգամ Հայոց գահին բարձրանալը
դ. Խոսրով I-ի արշավանքը Կովկասյան ցեղերի դեմ
ե. Տրդատ II-ի գլխավորությամբ Կարակալլայի զորքերի վտարումը Մեծ Հայքից
զ. Հայոց գահի հանձնումը Բակուր Արշակունուն

1) բ
2) դ
3) ե
4) ա

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը:**

ա. Խեչոյի հեծյալ գնդի մուտքը Վան:
բ. Անդրանիկի գլխավորած առաջին կամավորական ջոկատի կողմից Բիթլիսի գրավումը:
գ. Վանում մեծ հեղինակություն վայելող Իշխանի և Վռամյանի սպանությունը:
դ.Մուսա լեռան ինքնապաշտպանության մասնակից հայերի տարհանումը:
ե. Դրոյի գլխավորած երկրորդ ջոկատի մուտքը Մուշ:
զ. Երիտթուրքական կառավարության կողմից Օսմանյան կայսրությունից քաղաքացիների մուտքն ու ելքը արգելող օրենքի ընդունումը:

1) ա
2) բ
3) ե
4) զ

25 **Նշված գործիչներին համապատասխանեցրե՛ք նրանց մասնակցած ռազմական գործողությունների հետ:**

1. Թաթուլ Կրպեյան
2. Սիմոն Աչիգյոզյան
3. Արկադի Տեր-Թադևոսյան
4. Կարապետ Քահքեջյան
5. Մոնթե Մելքոնյան

ա. Երասխի պաշտպանական մարտեր
բ. Շուշիի ազատագրում
գ. Գետաշենի ինքնապաշտպանություն
դ. Խոջալուի ադրբեջանական կրակակետի լռեցումը
ե. Մարտունաշենի պաշտպանություն
զ. ԼՂՀ Մարտունու շրջանի ինքնապաշտպանական մարտեր

1) 1-զ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-զ
2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-զ
3) 1-զ, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ե
4) 1-զ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-ե

26 **Ո՞ր տարբերակում է Վարդանանց ապստամբության ժամանակ ստեղծված կառավարության կազմի բոլոր համապատասխանեցումները ճիշտ:**

1. Վարդան Մամիկոնյան
2. Վասակ Սյունի
3. Խորեն Խորխոռունի
4. Հովսեփ Վայոցձորցի

ա. մաղխազ
բ. սպարապետ
գ. մեծ դատավոր
դ. հայր մարդպետ
ե. մարզպան

1) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
3) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ
4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ

27 **Տրվածներից որո՞նք են 1920 թ. հոկտեմբերի 28-ին նախաստորագրված «Եզրափակիչ որոշման արձանագրության» պայմաններից։**

ա. Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ։
բ. Հայաստանը զրկվելու էր ընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից։
գ. Հայաստանի Հանրապետությունը հրաժարվելու էր Ղարաբաղի նկատմամբ պահանջներից։
դ. Հայաստանում իշխանությունն անցնելու էր Ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ ընդգրկվելու էին երկու ձախ դաշնակցականներ։
ե. Հայաստանը ընդունելու էր ՌՍԴԽՀ կառավարության բարեկամական օժանդակությունը՝ Թուրքիայի հետ տարածքային հարցերի լուծման հարցում։
զ. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր քեմալականներին զենքի ու զինամթերքի տրամադրումից։

1) ա, բ, զ
2) ա, գ, ե
3) բ, դ, ե
4) գ, դ, զ

28 **Տրված պատճառահետևանքային կապերից ո՞րն է սխալ։**

1) Արտաշես I-ի իրականացրած բարեփոխման հետևանքով Անահիտ աստվածուհու տաճարում կանգնեցվել են թագավորի նախնիների արձանները։
2) Արտաշտես II-ի վարած հակահռոմեական քաղաքականության հետևանքով Ք. ա. 20 թ. հայոց գահին բազմեց Տիգրան IV-ը։
3) Լուկուլլոսի պարտության հետևանքով հայկական գերիշխանությունը վերականգնվեց Ասորիքում և Միջերկրական ծովի ափերին։
4) Ք. ա. 34 թ. Անտոնիոսի արշավանքի հետևանքով թալանվեց հայոց արքունի գանձարանը, Եգիպտոս տարվեց հսկայական ավար և գերիներ։

29 **Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

1) Հայ առաքելական եկեղեցու առաջնորդական աթոռները, մինչև Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց եկեղեցու նվիրապետության հաստատումը, Արտազում, Եդեսիայում, Սյունիքում էին:
2) Միրիոկեֆալոնի ճակատամարտի պարտությունը և Անտիոքի անկումը վերջ են դրել քրիստոնեա-մոնոզոլական դաշինք ստեղծելու Հեթումի ծրագրին:
3) Զաքարյանների իշխանապետությունն իր մեջ ընդգրկել է Շիրակը, Արարատյան դաշտը, Սյունիքը, Փայտակարանը:
4) Դամասկոսի 652 թ. հայ-արաբական դաշնագրով Հայաստանում տեղակայվել է արաբական զորք:

30 **Նշվածներից ո՞րը Հայաստանի ազատագրության Հյուսիսային ծրագրի կետերից չէ:**

1) Ռուսաստանը Հայաստանում ունենալու էր որոշակի քանակությամբ զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար:
2) Նախկին հողատերերին վերադարձվելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի:
3) Հայաստանի և Ռուսաստանի միջև պետք է կնքվեր առևտրական պայմանագիր, իսկ Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրվեր նավահանգիստ:
4) Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:

31 **1921 թ. Կարսի կոնֆերանսում ո՞վ է եղել հայկական պատվիրակության ղեկավարը:**

1) Սարգիս Կասյան
2) Ալեքսանդր Բեկզադյան
3) Ասքանազ Մռավյան
4) Ալեքսանդր Մյասնիկյան

32 **Ո՞ր ապստամբությունն է հայ նշանավոր բանաստեղծ Ս. Շահազիզը բնութագրել հետևյալ խոսքերով.**

«հայկական քաջասրտության փառավոր ապացույց»:

1) 1862 թ. Զեյթունի ապստամբությունը
2) 1894 թ. Սասունի ապստամբությունը
3) 1895-1896 թթ. Զեյթունի ապստամբությունը
4) 1904 թ. Սասունի ապստամբությունը

33 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը:**

«Այն ջահը, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա չի հանգչի երբեք և կլուսավորի Առաջավոր Ասիան»:

1) Յուրի Ղամբարյան
2) Մանուկ Աբեղյան
3) Ալեքսանդր Խատիսյան
4) Նիկոլ Աղբալյան

34 **Ո՞ր ճակատամարտի մասին է հետևյալ մեջբերումը.**

«Հայերը, նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին:
Այնժամ [հռոմեացի զորավարը], քանզի շատերը վիրավորվել էին, և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց»:

1) Տիգրանակերտի
2) Հռանդեայի
3) Արածանիի
4) Խառանի

35 **Տերմինների կամ հասկացությունների բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1. 1995 թ. ընտրությունների ժամանակ ՀՀՇ-ն, իր շուրջը համախմբելով մի շարք կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, ձևավորեց քաղաքական միավորում, որը անվանվեց «Հանրապետություն»:
2. 2003 թ. ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Օրինաց երկիր կուսակցությունը և Երկրապահ-կամավորականների միությունը ձևավորեցին դաշինք, որն անվանվեց «Միասնություն»:
3. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Թուրքիայի նախագահին Հայաստան հրավիրելու նախաձեռնությունը միջազգային հանրության կողմից անվանվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»:
4. 1991 թ. դեկտեմբերին Բելովեժյան արգելանոց-անտառում կայացած հանդիպումից հետո Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի նախագահները հայտարարեցին ԽՍՀՄ փլուզման և նոր կազմակերպության ստեղծման մասին, որն անվանվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն:
5. 2008 թ. ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ հանրապետության ընդդիմադիր դաշտի մի խումբ կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ միավորվեցին՝ ձևավորելով նոր քաղաքական միավոր, որն անվանվեց Հայ ժողովրդական կուսակցություն:

36 **Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1. Վանի թագավորության շրջանում օգտագործված սեպագիրը կոչվում էր հիերոգլիֆ:
2. Ք.ա. XIV դ. խեթական արձանագրությունում հիշատակվող հայկական առաջին պետական կազմավորումը կոչվում է Արատտա:
3. Վանի թագավորությունում գործում էր Ավագների խորհուրդը, որի անդամները համարվում էին արքայի «խորհրդականներ»:
4. Մ. Խորենացու հաղորդմամբ Երվանդ IV- ի կառուցած նոր մայրաքաղաքը անվանվում է Երվանդակերտ:
5. Ըստ հայկական ավանդազրույցի Հայկ նահապետի ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացել է Հայաստանի «Արմենիա» անվանումը:

37 **Տրվածներից որո՞նք Խորհրդային Հայաստանի առաջին հնգամյակի արդյունքները չեն։**

1. Խոշոր արդյունաբերության արտադրանքն աճեց 4,5 անգամ, իսկ մանր արդյունաբերությունը՝ 3 անգամ։
2. Շահագործման հանձնվեց Երևանի հէկ-ը։
3. Շահագործման հանձնվեց Երևանի Նաիրիտի գործարանը։
4. Կառուցվեց և շահագործման հանձնվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն։
5. Ձևավորվեցին շուրջ 1000 կոլեկտիվ տնտեսություններ։

38 **Տրվածներից որո՞նք են սխալ արտացոլում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1. Գոդերձ II-ի հետ կնքած պայմանագրի շնորհիվ Տիգրան Մեծը հաստատում է Պարթևստանի նկատմամբ Մեծ Հայքի գերիշխանությունը։
2. Ք. ա. 92 թ. հռոմեա-պարթևական պայմանագրի շնորհիվ Տիգրան Մեծին հաջողվել է իր թագավորությանը միացնել Ադիաբենեն, Միգդոնիան և Օսրոյենեն։
3. Ռազմական հզոր ուժ ունենալու շնորհիվ Տիգրան Մեծը Սելևկյան գահին հրավիրվելու ամենահավանական թեկնածու է դիտարկվել Սելևկյան ավագանու կողմից։
4. Լուկուլլոսի պարտության հետևանքով վերականգնվեց Հայկական տերության ռազմական հեղինակությունը։
5. Արտաշատի պայմանագրի հետևանքով Տիգրան Մեծը կորցրեց «արքայից արքա» տիտղոսը։

39 **Ընտրե՛ք սխալ պնդումները։**

1. Հայոց արքա Սանատրուկը մահացել է 110 թվականին և թաղվել Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառի Անի բերդում։
2. Պարթևները Բակուր Արշակունու Հայոց գահին բարձրանալը համարել են Հռանդեայի պայմանագրի խախտում և գահընկեց արել նրան։
3. Մակրինոս կայսրն ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման Տրդատ II-ին է վերադարձրել հայոց թագուհուն։
4. Սեպտիմիոս Սևերոսի և Վաղարշ II-ի միջև կնքված պայմանագրի արդյունքում կայսրը ճանաչեց Հայոց արքայի իրավունքները Հյուսիսային Միջագետքում։
5. Ոսխայի ճակատամարտում հայ-հռոմեական զորքերը պարտության են մատնել Ներսեհին և փախուստի մատնել նրան։
6. Շապուհ I-ը, օգտվելով Հռոմում ծագած ներքին խռովություններից, III դարի կեսերին արշավել է Մեծ Հայքի թագավորություն։

40 **Ընտրե՛ք ճիշտ պնդումները։**

1. Գագիկ Արծրունու թագավորությունն օրինական ճանաչվեց Բյուզանդական կայսրության, օսերի, Վիրքի ու Աղվանքի թագավորությունների կողմից։
2. Թեոդորոս Ռշտունին վարել է բյուզանդամետ քաղաքականություն կառավարման ողջ ընթացքում։
3. 748-750 թթ. հակաարաբական ապստամության կազմակերպիչներից Դավիթ Մամիկոնյանը սպանվել է խալիֆի հրամանով։
4. Կիլիկյան Հայաստանում պատերազմներին մասնակցում էր միայն մշտական կանոնավոր բանակը. աշխարհազորը ճակատամարտերին չէր մասնակցում։
5. Մովսես Խորենացու հաղորդմամբ Բարդաճանն Անի ամրոցում գոյություն ունեցած մեհենական պատմագրության արխիվից թարգմանություններ է կատարել ասորերեն և հունարեն։
6. Ավարայրի ճակատամարտում նահատակված հայորդիներին սրբերի շարքին դասելու համար հիմք է ծառայել Ներսես Ա Պարթևի սահմանված կարգը։

41 **Ո՞ր իրադարձությունն է խախտում տրված շարքի ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը:**

1. Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի կողմից ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի ղեկավարներին հեռագրի ուղարկումը՝ Հայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու խնդրանքով:
2. Խորհրդային Հայաստանի կառավարությանն առընթեր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտեի կազմավորումը:
3. Մեծ հայրենադրձության ժամանակ հայրենադարձների առաջին քարավանի ժամանումը Բաթում նավահանգիստ:
4. Խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին ԽՍՀՄ կառավարության որոշման ընդունումը:
5. ԽՍՀՄ կառավարության որոշումը Մեծ հայրենադարձության շրջանակում սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին:
6. ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտեի գործունեության դադարեցումը:

42 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:**

1. Գագիկ II թագավորի սպանության վրեժի լուծումը
2. Հայոց կաթողիկոսության փոխադրումը Հռոմկլա
3. Բերդուսի ճակատամարտը
4. Անավարզայի հռչակումը Կիլիկիայի մայրաքաղաք
5. Թորոս II-ի կառավարման ավարտը

43 **Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցրե՛ք նրանց հետ կապված իրադարձություններին:**

Հայոց կաթողիկոս	*Իրադարձություն*
ա. Հովսեփ Ա Վայոցձորցի	1. Ամարասի եկեղեցու կառուցումը
բ. Վրթանես Ա Պարթև	2. Շահապիվանի ժողովի հրավիրումը
գ. Ներսես Ա Պարթև	3. Աշտիշատի ժողովի հրավիրումը
դ. Գրիգոր Լուսավորիչ	4. Վահանանց ապստամբությունը
ե. Ներսես Գ Տայեցի	5. Զվարթնոցի տաճարի կառուցումը
	6. Հայրենիքի համար զոհված նահատակների մասին սրբադասման կարգի ընդունումը

ա	բ	գ	դ	ե

44 **Գործիչներին համապատասխանեցրե՛ք նրանց գործունեության հետ։**

Ա. 1877 թ. նոյեմբերին Կարսի գրավումը։
Բ. Նրա գլխավորած Երևանյան ջոկատը օգնության է հասել և ազատագրել է Բայազետի կայազորին թուրքական պաշարումից։
Գ. Շամքոր գետի ափին 1826 թ. ջախջախել է պարսկական բանակին։
Դ. 1827 թ. հոկտեմբերին Երևանի բերդի գրավումը։
Ե. Նրա գլխավորած հեծյալ ջոկատը 1826 թ. մարտական գործողություններ է իրականացրել Ղազախ-Շամշադինում։

1. Իվան Պասկևիչ
2. Վալերիան Մադաթով
3. Արշակ Տեր-Ղուկասով
4. Միխայիլ Լորիս-Մելիքով
5. Գրիգոր Մանուչարյան
6. Հովհաննես Լազարև

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Տրված վեց պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը։**

1. Օսմանյան կայսրությունում ազդեցություն տարածելու նպատակով եվրոպական մեծ տերությունների միջև պայքարի արդյունքում առաջացած միջազգային հարաբերությունների հիմնախնդիրը ստացել է «Արևելյան հարց» անվանումը։
2. Ըստ Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի՝ Էրզրումը և Բայազետը մնում են Ռուսական կայսրության կազմում։
3. Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը Բեռլինի վեհաժողովի վերջին օրը՝ հուլիսի 1-ին, բողոք են ներկայացրել մեծ տերություններին։
4. Սան Ստեֆանոյի պայմանագրի 27–րդ հոդվածը իրավունք է տալիս ռուսական զորքին 6 ամիս ժամկետով մնալու Հայաստանում։
5. 1853 թ. աշնանը սկսված Ղրիմի կամ Արևելյան պատերազմի ընթացքում Թուրքիային միացան Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Սարդինական թագավորությունը։
6. Խորեն Նարբեյը Պետերբուրգում Ալեքսանդր II կայսրին Հայաստանի ինքնավարության ծրագիրը հանձնելուց հետո մեկնում է Բեռլին և միանում Խրիմյանին ու Չերազին։

46 **Տերմինների տրված բացատրություններից որո՞նք են սխալ:**

ա. Հայոց թագավորի և նախարարների հեծելազորային ուժերի միավորումն անվանվում էր հայոց այրուձի:

բ. Հայ նախարարների տեղն արքունիքում սահմանող փաստաթուղթը անվանվում էր զորանամակ:

գ. Արշակունյաց արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունն իրականացնող գործակալն անվանվում էր հայր մարդպետ:

դ. Արշակունյաց ոստանի պաշտպանությունն իրականացնող հատուկ հեծյալ ջոկատներից կազմված միավորումն անվանվում էր արքունական գունդ:

ե. Թագավորի անձի պաշտպանությունն իրականացնող ընտրյալ նետաձիգներից բաղկացած միավորումը կոչվում էր մաղխազական այրուձի:

զ. Ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողատիրության ձևը կոչվում էր պարգևականք:

1) ա, բ, զ
2) բ, դ, զ
3) գ, դ, ե
4) ա, գ, ե

47 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները:**

ա. Նիկոլայ I-ի 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների տարածքի վրա կազմվեց վարչական նոր միավոր, որն անվանվեց Երևանի նահանգ:

բ. Կ. Պոլսի հայ համայնքի գործերի կառավարման նպատակով 1844 թ. ստեղծված մարմինը կոչվում էր Ազգային ժողով:

գ. 1844 թ. Ռուսական կայսրության կողմից Կովկասում ստեղծվեց վարչական նոր միավոր, որն անվանվեց Կովկասի կառավարչապետություն:

դ. Օսմանյան կայսրության ընդհանուր ճգնաժամը կանխելու նպատակով սուլթանական կառավարությունը 1839 թ. հրապարակում է բարենորոգումների հրովարտակ, որն անվանվեց թանզիմաթ:

ե. 1860 թ. մայիսի 24-ին Կ.Պոլսի Ազգային ընդհանուր ժողովը հաստատում է արևմտահայ համայնքի ներքին կյանքին վերաբերվող կանոնադրությունը, որը Ն. Ռուսինյանի առաջարկությամբ կոչվեց «Ազգային սահմանադրություն»:

զ. Արևմտահայ «Ազգային սահմանադրության» համաձայն ամբողջ ազգի կողմից ընտրվելու էր օրենսդիր մարմին, որն անվանվում էր Ազգային ժողով:

է. Հայկական մարզի վերացումից հետո Շամախի կենտրոնով ստեղծված վարչաքաղաքական նոր միավորը կոչվում է Վրացա-Իմերեթական նահանգ:

1) ա, բ, ե
2) ա, գ, է
3) բ, դ, ե
4) գ, զ, է

48 **Տրվածներից որո՞նք են Սմբատ II Բագրատունու գործունեության հետևանքներ:**

ա.կաթողիկոսական աթոռը փոխադրվեց Արգինայի վանք

բ. Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակվեց Երազգավորսը

գ. հնազանդվեցին Սյունյաց և Աղվանից թեմերը

դ.Դվինի ամիրայությունն միացվեց Անիի Բագրատունյաց թագավորությանը

ե.Անիի Բագրատունիներից անկախ հռչակվեց Սյունիքի թագավորությունը

զ. կնքվեց հայ-բյուզանդական հակաարաբական դաշինք

է. Արցախի Խաչեն գավառը միացվեց Բագրատունյաց թագավորությանը

ը. կառուցել է Անի քաղաքն իր մեջ ընդգրկող պարիսպների երկրորդ գիծը

1) ա, դ, է
2) բ, զ, ը
3) դ, ե, ը
4) գ, դ, է

49 **Թվարկվածներից որո՞նք 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման հետևանքներից չեն:**

ա. Հայկական կուսակցությունները ճանաչեցին Օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և դադարեցրին իրենց ընդհատակյա գործունեությունը:

բ. Լուծարվեցին հայդուկային խմբերը, կուսակցությունները հրաժարվեցին արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելուց:

գ. Տարագիր և վտարանդի բազմաթիվ հայեր Այսրկովկասից և այլ վայրերից վերադարձան արևմտահայաստան:

դ. Հայերը ճանաչվեցին օսմանյան տերության «իրավահավասար» քաղաքացիներ և երիտթուրքերը չշարունակեցին Աբդուլ Համիդի հակահայ քաղաքականությունը:

ե. Երիտթուրքերի ներքին և արտաքին քաղաքականության առանցքը դարձավ օսմանիզմը, որը ենթադրում էր թյուրքալեզու բոլոր ժողովուրդներին մեկ միասնական պետության մեջ միավորում:

զ. Օսմանյան կայսրությունում աշխուժացավ հայ գրական շարժումը, առաջադիմեց կրթամշակութային կյանքը:

է. Երիտթուրքերը գործնականում կիրառեցին Ֆրանսիական մեծ հեղափոխությունից ընդօրինակած «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը:

1) գ, դ, զ
2) ա, բ, ե
3) դ, ե, է
4) բ, դ, է

50 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ Վանի թագավորությունում տեղի ունեցած իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը:**

ա. Սկյութների ասպատակությունների սկիզբը
բ. Թագավորության վերածումը գերտերության
գ. «Չորս ծովերի» տերության ստեղծումը
դ. Միասնական դիցարանի ստեղծումը
ե. Կիմերների հետ դաշնակցումը
զ. Վանի աշխարհակալության ստեղծումը
է. Խալդիի տաճարի ավիրումը Սարգոն II-ի կողմից
ը. Սարդուրի III-ի հիշատակումը ասորեստանյան արձանագրությունում
թ. Տուշպա քաղաքի կառուցումը

1) է
2) ե
3) ա
4) ը

51 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել երրորդը:**

ա. Բարձր դռան հրամանով «Հայաստան» անվան գործածության արգելումը:
բ. «Հայրենիքի սիրո գրասենյակ» խմբակի բացահայտումը:
գ. «Միություն ի փրկություն» խմբակի գործունեության դադարեցումը:
դ. Երևանում «Հայասեր-ազգասեր» խմբակի ձևավորումը:
ե. Կարինում «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը:
զ. Մոսկվայի «Հայրենասերների միություն» կազմակերպության գործունեության դադարեցումը:
է. Կարինում «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անդամների դատավարության անցկացումը:

1) ա
2) գ
3) դ
4) է

52 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը։**

ա. «Հայ երիտասարդական միություն» խմբի գործունեության բացահայտումը։
բ. ԱՄԿ «Փարոս» անունով թերթի առաջին համարի լույսընծայումը։
գ. Հայաստանում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը։
դ. Հրաչյա Ղափլանյանի ղեկավարությամբ Երևանի դրամատիկական թատրոնի հիմնադրումը։
ե. Հայաստանի Պարի պետական անսամբլի ստեղծումը։
զ. Հակախորհրդային գործունեության համար Անդրանիկ Մարգարյանի դատապարտումը։
է. Գուրգեն Յանիկյանի կողմից Լոս Անջելեսի Սանտա Բարբարա արվարձանային քաղաքում Թուրքիայի հյուպատոսի և փոխհյուպատոսի գնդակահարումը։
ը. ՀԿԿ Կենտկոմի նախագահության կողմից «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» ծրագրի հաստատումը։
թ. Հայկական ատոմակայանի գործարկումը։

1) գ
2) դ
3) է
4) ը

53 **Կատարե՛ք համապատասխանեցում և ընտրե՛ք պատասխանի ճիշտ տարբերակը։**

1. Ֆիզուլիի ազատագրումը	ա. 1993 թ. ապրիլ
2. Զանգելանի ազատագրումը	բ. 1993 թ. հունիսի 28
3. Աղդամի ազատագրումը	գ. 1993 թ. հուլիսի 23
4. Քարվաճառի ազատագրումը	դ. 1993 թ. օգոստոսի 22
5. Կուբաթլիի ազատագրումը	ե. 1993 թ. օգոստոսի 31
6. Հորադիզի ազատագրումը	զ. 1993 թ. հոկտեմբեր
	է. 1993 թ. նոյեմբերի 1

1) 1-ե, 2-է, 3-ա, 4-զ, 5-գ, 6-դ
2) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-ե, 6-գ
3) 1-դ, 2-է, 3-գ, 4-ա, 5-ե, 6-զ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ, 5-է, 6-զ

54 **Ընտրե՛ք սխալ պնդումները։**

ա. ՀՍԽՀ Կարմիր բանակի հրամանատարի պաշտոնից ազատվելուց հետո Դրոն հունվարի 11-ին մի խումբ հայ սպաների հետ պարտադրված լքեց Հայաստանի սահմանները։

բ. 1920 թ. դեկտեմբերի վերջին Հայկոմկուսի պլենումը որոշեց ձերբակալել և մեկուսացնել ՀՅԴ բոլոր կոմիտեների և կազմակերպությունների ղեկավարներին, նախկին կառավարության անդամներին։

գ. 1921 թ. փետրվարի 16-18-ը Փետրվարյան ապստամբությունն արագ ընդգրկեց ՀՍԽՀ կենտրոնական մի շարք շրջանները՝ Բաշ Գյառնին, Կոտայքը, Թալինը, Դարալագյազը, Բաշ Ապարանը և այլն։

դ. Փետրվարյան ապստամբության ժամանակ «Ազատամարտ» և «Վարդան Զորավար» զրահագնացքների ապստամբների կողմն անցնելուց հետո ՀՍԽՀ պետական և կուսակցական մարմինները հեռացան Ղամարլու-Վեդի-Բասար ուղղությամբ։

ե. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո իշխանության տեղական գործադիր մարմիններ դարձան հեղկոմները, որոնք նշանակովի էին և ժամանակավոր։

զ. 1920 թ. դեկտեմբերի 8-ին Հայհեղկոմի հրապարակած «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին հրամանով» ռազմական կոմունիզմից անցում կատարվեց Նոր տնտեսական քաղաքականությանը (ՆԷՊ)։

է. Համառուսաստանյան Չեկայի կողմից արտակարգ լիազորություններով Հայաստան էր գործուղվել Գևորգ Աթարբեկյանը, որի քաղաքական կոշտ գիծը պաշտպանում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանը։

1) ա, գ, ե
2) բ, դ, զ
3) ա, ե, է
4) բ, գ, է

55 **Ո՞ր տարբերակում են բոլոր պնդումները սխալ։**

ա. Համաշխարհային պատմության մեջ Գառնիի տաճարի նախօրինակը Արդինի-Մուսասիրում գտնվող Խալդիի գլխավոր տաճարն է։

բ. Արմավիրից Ախուրյանի ափին կառուցված Բագարան սրբավայր-քաղաք են տեղափոխվել աստվածների արձաններ։

գ. Հռանդեայի պայմանագրով նախատեսված էր, որ Տրդատ II-ն Ներոնից Հռոմում պետք է ստանա Մեծ Հայքի թագավորության թագը։

դ. Բուն Հայոց տոմարի սկիզբ է համարվում 550 թ. հուլիսի 11-ը։

ե. Ք. ա. I դարում կառուցված Նեմրութ լեռան սրբավայրը գտնվում է Վանա լճի հարավարևմտյան ափին։

զ. Նեմրութի սրբավայրում 8-9 մետրանոց աստվածների արձանների կողքին կանգնեցվել են Անտիոքոս I Երվանդունու և արքայական նախնիների քանդակները։

է. Ք.ա. 5 թ. Օգոստոսի հրամանով Հայաստան ժամանած Գայոս Կեսարը գահընկեց է արել Տիգրան IV-ին և հայոց թագավոր հռչակել Արտավազդ III-ին։

1) ա, գ, զ
2) դ, ե, է
3) բ, գ, դ
4) գ, դ, ե

56 **Ո՞ր տարբերակում են բոլոր պնդումները ճիշտ։**

ա. Խաչակիր մատենագիրները իրենց աղբյուրներում Կիլիկիայի հայկական պետությանն անվանել են Հայոց աշխարհ կամ Մեծ Հայք։

բ. 1065 թ. Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց կայսրից ստացել է Կիլիկյան Տավրոսում գտնվող Ծամնդավ բերդաքաղաքը։

գ. Աշոտ Բագրատունին 804 թ. իր նստավայրը Դարույնքից տեղափոխել է Ախուրյանի ափին գտնվող Շիրակավան բերդաքաղաք։

դ. Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենն ու ասորերենը։

ե. 1323 թ. հայ-եգիպտական պայմանագրով Կիլիկիան Եգիպտոսին է զիջել Այաս նավահանգիստը և Անավարզա քաղաքը։

զ.1254 թ. հայ-մոնղոլական պայմանագրով Հայոց եկեղեցին և վանքերն ազատվել են հարկերից։

է. Ղևոնդի «Պատմութիւն» երկը տարածական լայն ընդգրկում ունի և ներառում է Առաջավոր Ասիայի X-XII դարերի պատմությունը։

1) ա, զ, է
2) գ, դ, ը
3) բ, դ, զ
4) բ, ե, է

57 **Ո՞ր տարբերակում է հայոց կաթողիկոսի և նրա հետ կապված իրադարձության բոլոր համապատասխանեցումները ճիշտ:**

Հայոց կաթողիկոս	*Իրադարձություն*
ա. Զաքարիա Զագեցի	1. 948 թ. կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինայի վանք
բ. Սահակ Պարթև	2. գումարել է Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը
գ. Ներսես Բ Բագրևանդացի	3. կառուցել է Ս. Հռիփսիմեի տաճարը
դ. Գևորգ Գառնեցի	4. 869 թ. եկեղեցական ժողովի հրավիրումը հայ իշխանների մասնակցությամբ
ե. Անանիա Մոկացի	5. Շահապիվանի եկեղեցական ժողովի հրավիրումը
զ. Կոմիտաս Մամիկոնյան	6. հայոց թագավոր է օծել Աշոտ Ա Բագրատունուն
	7. հայոց սպարապետ է նշանակել Համազասպ Մամիկոնյանին

1) ա-6, բ-2, գ-3, դ-7, ե-1, զ-4
2) ա-6, բ-2, գ-5, դ-4, ե-1, զ-3
3) ա-4, բ-7, գ-5, դ-1, ե-3, զ-2
4) ա-4, բ-7, գ-2, դ-6, ե-1, զ-3

58 **Ընտրե՛ք տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները։**

1. Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը անվանվում է նաև Հայ դատի հանձնախումբ։
2. Ազգերի լիգայի ընդունած որոշմամբ՝ Կիլիկիայում կամ Թուրքիայի հյուսիս-արևելյան վիլայեթներում հայ գաղթականների բնակության համար ստեղծվելիք շրջանը անվանվում է Հայոց տուն։
3. Էջմիածնում հիմնված մշակութային–պատմական ինստիտուտը 1925 թ. վերափոխվելուց հետո կոչվեց Գիտության և արվեստի ինստիտուտ։
4. Ա. Խատիսյանի կառավարությանը փոխարինած գործադիր իշխանությունը կոչվում էր ազգային կենտրոնական կառավարություն։
5. Ուննոր գյուղացիության ունեցվածքի բռնագրավման և նրանց անբարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում բնակեցման գործընթացը ստացել է կուլակաթափություն անվանումը։
6. Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման համար 1921 թ. Երևանում ստեղծված մարմինը անվանվեց Հայ օգնության միություն։
7. Հայկական հարցի լուծման խնդրանքով ՄԱԿ–ի 1945 թ. անդրանիկ կոնֆերանսին հուշագրեր ներկայացրած երկու մարմիններն էին Հայկական ազգային կոմիտեն և Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը։
8. 1919 թ. մայիսի 28–ին Հայաստանի կառավարության կողմից ընդունված փաստաթուղթը կոչվում էր Հայաստանի անկախության հռչակագիր։

59 **Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները։**

1. Դպրության աստված Տիրի պաշտամունքի կենտրոնը կոչվում էր Բագառիճ։
2. Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջաններն ընդգրկող շրջանը կոչվում էր Հնդեվրոպական նախահայրենիք։
3. Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոն համարվող քաղաքը կոչվում էր Կումենու։
4. Սալմանասար I-ի ասորեստանյան արձանագրությունում հիշատակված հայկական պետական կազմավորումը կոչվում էր Հայասա։
5. Կիլիկյան Հայաստանի դատարաններում գործածված հայկական, հունական և խաչակրաց իրավանորմերը միավորող օրենսգիրքն անվանվում էր Անտիոքի ասիզներ։
6. Բագրատունյաց շրջանում ավատատիրական խոշոր տնտեսություններն անվանվում էին տերունի կալվածքներ։
7. Տիգրան Մեծի տերության երեք մայրաքաղաքները՝ Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը, միմյանց կապող ճանապարհը անվանվում էր Արքունի պողոտա։

60 **Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը։**

1. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծման, և դրան Թուրքիայի անդամակցման պատճառով Խորհրդային Միության կառավարությունը 1953 թ. մայիսին պաշտոնապես հայտարարեց, որ Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի։
2. Ստալինը Պոտսդամի կոնֆերանսում զիջեց և քննարկումից հանեց հայկական տարածքների հարցը, քանի որ Գերմանիան և ԱՄՆ-ն պաշտպանում էին Թուրքիային։
3. Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված հայերի զանգվածային հայրենադարձության պատճառներից էր Խորհրդային Հայաստանի հեղինակության բարձրացումը։
4. Երկրորդ աշխարհամարտի ընթացքում ԽՍՀՄ-ի դեմ Թուրքիայի բացեիբաց ելույթների և ռազմական առճակատման հետևանքով 1945 թ. մարտին ԽՍՀՄ կառավարությունը չեղյալ հայտարարեց խորհրդա-թուրքական չեզոքության պայմանագիրը։
5. Մեծ հայրենադարձության ժամանակ դաշնակցությունը անհանգստացած էր զանգվածային ներգաղթ իրականացնելուց, քանի որ ԽՍՀՄ կառավարությունը հրաժարվել էր հայկական հողերը վերադարձնելու պահանջից։
6. 1950–ական թթ. վերջին ստալինյան բռնաճնշումների հետևանքը Սփյուռքի հետ հարաբերությունների ընդհատումն էր։
7. Հետպատերազմյան շրջանում սկսված սառը պատերազմը, տնտեսական դժվարությունները, ԽՍՀՄ-ի ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները 1948 թ. սփյուռքահայերի հայրենադարձության կասեցման պատճառ դարձան։

61 **Տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ:**

1. 298 թ. Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում պարթևների տարածքային զիջումները էին:
2. Գյուտ կաթողիկոսի՝ Տիզբոն մեկնելու պատճառը Խոսրով II-ի գումարած ժողովին մասնակցելն էր:
3. Վարդան Կրտսերի ապստամբության արդյունք էր Հայոց Արևելից կողմերում ու հարակից տարածքներում հայկական թագավորության ստեղծումը:
4. 571-572 թթ. հակապարսկական ապստամբության հետևանքը Դվին քաղաքի ազատագրումն էր:
5. Հայերի՝ Վահրամ Չուբինի բարձրացրած ապստամբությանը ցուցաբերած ռազմական օգնության հետևանքով վերականգնվեց Մեծ Հայքի ինքնուրույնությունը:
6. Հուստինիանոս I-ի 536 թ. օրենքի կիրառման արդյունքում ստեղծվեցին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերը:
7. Թեոդորոս Ռշտունու 639 թ. միավորիչ գործունեության հետևանքով Կոստանդին II-ը ճանաչում է նրա իշխանությունը նաև Վիրքի և Աղվանքի նկատմամբ:
8. IX դարի վերջին Խլաթի ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայ–բյուզանդական 893 թ. կնքված պայմանագիրն էր:

62 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ։**

1. Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն 1912 թ. հոկտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Գ. Գոլիցինի միջոցով դիմեց ռուսական կայսրին՝ հայերին պաշտպանելու խնդրանքով։
2. Թիֆլիսում 1912 թ. հոկտեմբերին ձևավորվեց համազգային նոր կազմակերպություն՝ Հայոց ազգային խորհուրդը։
3. 1912 թ. նոյեմբերի 10-ի կոնդակով եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան նշանակվեց Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ և նրա գլխավորությամբ ստեղծվեց Ազգային պատվիրակություն։
4. Բալկանյան երկրներ Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը և Չեռնոգորիան 1912 թ. հոկտեմբերին ստեղծեցին ռազմական դաշինք, իսկ նոյեմբերին պատերազմ սկսեցին Օսմանյան Թուրքիայի դեմ։
5. Կ.Պոլսում ռուսական դեսպանության թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամը կազմել է հայկական բարենորոգումների նախագիծ, համաձայն որի, Արևմտյան Հայաստանի հայկական վեց նահանգները բաժանվելու էին երկու նահանգի։
6. 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը կրկնում էր Մանդելշտամի նախագիծը՝ նախատեսելով հայկական նահանգների բաժանում երկու նահանգների։
7. Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը և Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմը 1913 թ. սեպտեմբերի 10-ին Արևմտյան Հայաստանի համար կազմեցին 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր։
8. Հայկական ազգային կուսակցությունները հիմնականում գոհունակությամբ ընդունեցին 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, քանի որ այն Հայաստանին տալիս էր ինքնավարություն։
9. 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրին համապատասխան 1914 թ. ապրիլին տեսուչներ ընտրվեցին հոլանդացի դիվանագետ Լ. Վեստենենկը և նորվեգացի գնդապետ Ն. Հոֆը։

63 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1. Հայ ժողովրդական կուսակցությունն իր 2-րդ համագումարում (1919 թ. սեպտեմբեր) որոշեց ծառայել Հայաստանի անկախ պետականության ու մշակույթի զարգացմանը, նպաստել ժողովրդավարական ու խորհրդարանական իրավակարգի հաստատմանը:
2. Հայաստանի առաջին հանրապետության գոյության ընթացքում հիմնական կառավարող կուսակցությունը եղել է ՀՅԴ-ն, որը կոալիցիոն կառավարություն է կազմել ՀԺԿ-ի, Ս.Դ. Հնչակյան և Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունների հետ:
3. ՀՅԴ 9-րդ համագումարը հրաժարվեց կուսակցության երկու՝ Արևելյան (Ռուսաստանի կազմում) և Արևմտյան (անկախ) Հայաստանների վերաբերյալ ծրագրային կետերից:
4. Հայաստանի առաջին հանրապետությունում կային տարբեր հասարակական կազմակերպություններ, որոնցից ամենազանգվածայինը արհեստակցական միություններն էին: Գործում էր այդպիսի 13 միություն:
5. Թուրքական զորքերի՝ դեպի Բաքու 1918 թ. մայիսի սկզբին սկսված ռազմարշավի դեմ պայքարում զոհվեց Սեպուհը:
6. Հայաստանի անկախացումից հետո՝ 1918 թ. հուլիսի կեսերին, ՀՀ դիվանագիտական առաքելություն հիմնվեց հարևան Վրաստանի Հանրապետությունում, որը ղեկավարում էր Հակոբ Բագրատունին:
7. 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ՝ նոյեմբերի 13-ին, Թիֆլիսում ստորագրվեց հայ-վրացական համաձայնագիր Լոռու չեզոք գոտի ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին:

64 **Արաբական խալիֆայության տիրապետության շրջանին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ:**

1. 703 թ. Սմբատ Բագրատունու 3000-անոց այրուձին արաբական 7000-անոց պատժիչ ջոկատին հանդիպել է Ակոռի գյուղի մոտ:
2. Արմինիայի առաջին արաբ կառավարչի հարկահանությանը և կրոնական հալածանքներին հայերը պատասխանել են ապստամբությամբ:
3. 748 թ. Այրարատի Ռշտունիք գավառի Գուկանք գյուղի մոտ ապստամբները Սմբատ իշխանի գլխավորությամբ պարտության են մատնել թշնամուն:
4. Արաբների տիրապետության ողջ ընթացքում հայ հոգևորականությունը ազատված է եղել հարկ վճարելուց:
5. Սասուն-Խութ գավառում Հովհանի հաջողություններից հետո Սասուն գավառը մտցվել է Արմինիայի մեջ:
6. 774-775 թթ. հակաարաբական ապստամբությունը սկսվել է Շիրակի Կումայրի գյուղից:
7. Հայոց իշխան և սպարապետ Աշոտ Բագրատունին կուրացվել է Գրիգոր Մամիկոյնանի հրամանով:

65 **Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

1. Տրդատ II-ի արշավանքը Տիզբոն
2. Ոսխայի ճակատամարտը
3. Հռոմեական կայսր Կարակալլայի զորքերի ջախջախումը Հայաստանում
4. Մազքութների ջախջախումը Ցլու գլուխ լեռան ճակատամարտում
5. Համազասպ Մամիկոնյանի նշանակումը հայոց սպարապետ
6. Արշակ III-ի գահակալության սկիզբը
7. Վռամշապուհի գահակալության սկիզբը
8. Խոսրով IV-ի երկրորդ անգամ հայոց գահ բարձրանալը

66 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ՝**

1. Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության երկրորդ գիրքը եզրափակող իրադարձությունները
2. «Սահմանադրութիւն կանոնական» երկի կազմումը
3. Նոր Ջուղայի հայկական տպարանի հիմնումը Խ. Կեսարացու ջանքերով
4. Աղբերց վանքի դպրոցի հիմնումը Ն. Մշեցու ջանքերով
5. «Դատաստանագրքի» կազմումը Մ. Գոշի կողմից
6. մանրանկարներով զարդարված առաջին ամբողջական ձեռագրի ստեղծումը
7. «Էջմիածնի ավետարանի» ձեռագրի կազմումը

67 **Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ:**

1. Հարություն Շմավոնյանի նախաձեռնությամբ հայոց առաջին պարբերականի՝ «Ազդարարի» լույս ընծայումը:
2. Ղուկաս Ինճիճյան վարդապետի խմբագրությամբ «Տարեգրություն» պարբերականի հրատարակումը:
3. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի նախաձեռնությամբ մայր հողի վրա տպարանի ստեղծումը:
4. Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության առաջին տպագրությունը:
5. Հովհաննես Լիմոնճյանի կողմից հայկական նոր ձայնագրության ստեղծումը:
6. Պետերբուրգում ռուսերենով Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության լույս ընծայումը:
7. «Բազմավեպ» պարբերականի առաջին համարի լույս ընծայումը:

68 **Պատմիչի անունը համապատասխանեցրե՛ք այն խոսքի հետ, որը նա գրել է:**

ա. Ստրաբոն
բ. Տակիտոս
գ.Պլուտարքոս
դ.Արիանոս
ե.Ապպիանոս
զ.Դիոն Կասիոս
է.Պոլիբիոս

1. «Հայոց թագավոր Սանատրուկն ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործը»
2. «Նոր մայրաքաղաքը բնակեցնելու համար Տիգրանն այստեղ է հրավիրում հայերից լավագույններին…»
3. «…հայերը նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին»
4. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»
5. Հայաստանն… աճել է Արտաշեսի ջանքերով… և ուստի այստեղ բոլորը միալեզու են»
6. «…այն լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով»
7. «Արտաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ազարակների սահմանները, կոփել է տվել քառակուսի քարեր և տնկել հողի մեջ»
8. «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»

ա	բ	գ	դ	ե	զ	է

69 **Ռազմական գործիչներին համապատասխանեցրե՛ք նրանց գլխավորած զորամիավորումների հետ:**

Ա. Երևանյան զորախումբ
Բ. Սարդարապատի ջոկատ
Գ. Առանձին հայկական կորպուսի առաջին դիվիզիա
Դ. Առանձին հայկական կորպուս
Ե. Հայկական առանձին հարվածային զորամաս
Զ. Առաջին աշխարհամարտի ժամանակ ձևավորված IV կամավորական ջոկատ
Է. Առաջին աշխարհամարտի ժամանակ ձևավորված VIII կամավորական ջոկատ

1. Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան
2. Մովսես Սիլիկյան
3. Քեռի
4. Համազասպ
5. Դանիել Բեկ-Փիրումյան
6. Թովմաս Նազարբեկյան
7. Անդրանիկ
8. Նիկոլ Աղբալյան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է, «Սխալ է» «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

1. Թորգոմա տունը գտնվել է Տիգրիսի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX-XVIII դարերում:
2. Շումերա-աքքադական սեպագիր արձանագրությունների համաձայն Արատտայի հովանավոր աստված Հայկը Հայ(ա)ի որդին էր:
3. Արագած լեռը և Արագածոտն գավառը անվանվում են Հայկ նահապետի ժառանգներից Արա Գեղեցիկի անունով:
4. Հայերի ծագման հունական ավանդազրույցի համաձայն Յասոնն ու ընկերներն երջանկության խորհրդանիշ ոսկե գեղմը ձեռք բերելու համար նավարկել են Սև ծովի արևելյան ափերը:
5. Հայոց ծագումնաբանության բնիկ հայկական ավանդազրույցի առանձին հատվածներ հիշատակվել են միջնադարի հայ մատենագիրների երկերում:
6. Ք. ա. III հազարամյակի վերջին Հայաստանի տարածքում սկսվել է հայերի ցեղային և վաղ պետական կազմավորումների առաջացման ժամանակաշրջանը: